

5.4. Դժբախտ պատահարները արտադրությունում 2015 թվականին

Ըստ ՀՀ կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2015թ. արձանագրվել է 45 արտադրական դժբախտ պատահար: 1 000 աշխատողի հաշվով (նրանց թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվաքանակների) տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.4:

Դժբախտ պատահարների դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2015թ.

	Դեպքերի քանակը, միավոր	Տուժածների թվաքանակը, մարդ		նրանցից՝ մահացածներ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	10	10	4	-	-
Արագածոտն	-	-	-	-	-
Արարատ	1	1	-	1	-
Արմավիր	1	1	-	1	-
Գեղարքունիք	4	4	-	-	-
Լոռի	7	7	-	-	-
Կոտայք	-	-	-	-	-
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	22	22	3	3	-
Վայոց ձոր	-	-	-	-	-
Տավուշ	-	-	-	-	-
Ընդամենը ՀՀ	45	45	7	5	-

Դժբախտ պատահարների դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական տեսակների (ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի), 2015թ.

	Դեպքերի քանակը, միավոր	Տուժածների թվաքանակը, մարդ		նրանցից՝ մահացածներ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
B Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	33	33	3	4	-
C Մշակող արդյունաբերություն	4	4	2	-	-
D Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	1	1	-	1	-
E Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	3	3	1	-	-
H Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	1	1	-	-	-
I Կազմության և հանրային սննդի կազմակերպում	1	1	1	-	-
J Տեղեկատվություն և կապ	2	2	-	-	-
Ընդամենը	45	45	7	5	-

Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց 2015թ. ավարտված ժամանակավոր անաշխատունակության հիման վրա հաշվարկված անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 2 068: Դժբախտ պատահարների հետևանքով ք.Երևանում և ՀՀ Սյունիքի մարզում 1-ական տղա-մարդ դարձել է I, ՀՀ Գեղարքունիքի մարզում 1 տղամարդ՝ II խմբի հաշմանդամ: Աշխատանքի գնալու ճանապարհին ք.Երևանում տեղի է ունեցել 2 դժբախտ պատահար՝ տուժել է 2 կին:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, 2015թ.

	մլն. դրամ
Ընդամենը	
Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	149.2
Կորցրած աշխատավարձի փոխհատուցում	42.5
Միանվագ նպաստ	4.2
Բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսեր	30.1
Այլ ծախսեր	28.0
Ընդամենը	254.0

Աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը, 2015թ.

	մլն. դրամ
Ընդամենը	
Հատուկ արտահագուստի ձեռք բերման համար	741.4
Անհատական պաշտպանության միջոցառումների վրա	336.3
Այլ ծախսեր	24.4
Ընդամենը	1 102.1